Վահան Թեքեյան

Ես սիրեցի

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե՝
Ձինքը որքա՜ն սիրեցի . . .
Ո՞վ կարդալ սիրտը գիտե:

Ամենեն մեծ հրճվանքիս,
Ամենեն սուր վշտերուս
Ներշնչողները, ավա՜ղ,
Ձիս չեն ճանչնար այս պահուս:

Սերս կարծես այն գետն էր,
Որ իր հոսանքը անբավ
Առավ լեռան ձյուներեն
Ու լեռը զայն չտեսավ:

Սերս այն դուռն էր կարծես,
Ուրկե ոչ ոք մտավ ներս .
Ծաղիկներով ծածկըված՝
Գաղտնի պարտեզ մըն էր սերս:

Ու եթե սերս ոմանք
Երկքնին վրա՝ անսահմա՜ն
Տեսան ծուխի մը նման,

Կրակն անոր չտեսան . . . :

. . . . . .

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե՝
Ձինքը որքա՛ն սիրեցի,
Ո՞վ կարդալ սիրտը գիտե . . . :